Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
փետրվարի 11-ի N 123 - Ն որոշման

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Ա Ռ Ա Ջ Ա Դ Ր Ա Ն Ք

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՓԱՄԵՐՁ՝ ՄԻՆՉԵՎ 1905.00 Մ ԲԱՑԱՐՁԱԿ ՆԻՇԸ ՏԱՐԱԾՔԻ 1:1000 ՄԱՍՇՏԱԲԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Աշխատանքների նպատակը Սևանա լճի ափամերձ՝ մինչև 1905.00 մ բացարձակ նիշը տարածքում քարտեզագրագեոդեզիական աշխատանքների իրականացումն է, 1:1000 մասշտաբի տեղագրական քարտեզների ստեղծումը՝ ռելիեֆի 0.5 մ կտրվածքով, իսկ մինչև 4 աստիճան թեքություններում՝ 0.25 մ ռելիեֆի կտրվածքով, գոյություն ունեցող տեղագրական և կադաստրային քարտեզների համադրումն ու թարմացումը, հողամասերի սահմանազատումը և դասակարգումն ըստ սեփականության սուբյեկտների, ըստ նպատակային և գործառնական նշանակության, էքսպլիկացիայի կազմումը։

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Կատարվող աշխատանքների անհրաժեշտ բաղադրիչներն են գոյություն ունեցող ելակետային տվյալների հավաքագրումն ու ուսումնասիրությունը, հանութային պլանա-բարձունքային հիմքի ստեղծումը, մինչև 1905.00 մ նիշը 1:1000 մասշտաբի տեղագրական քարտեզների ստեղծման նպատակով իրադրության և ռելիեֆի հանութագրումը՝ ռելիեֆի 0.5 մ կտրվածքով, իսկ մինչև 4 աստիճան թեքություններում՝ 0.25 մ ռելիեֆի կտրվածքով, նոր առաջացած գույքերի հանութագրումը, աշխարհագրական օբյեկտների սահմանների ճշգրտումն ու հանութագրումը, գոյություն ունեցող տեղագրական և կադաստրային քարտեզների համադրումն ու թարմացումը, քարտեզների թվայնացումը, հողամասերի սահմանազատումը և դասակարգումն ըստ սեփականության սուբյեկտների, ըստ

նպատակային ու գործառնական նշանակությունների, անշարժ գույքի միավորների ցուցակների, և էքսպլիկացիայի կազմումը։

1:1000 մասշտաբի տեղագրական քարտեզները պետք է ստեղծվեն թվային միասնական կոորդինատային ու բարձունքային համակարգերում, որոնք արտացոլում են տեղանքի արդիական պատկերը տվյալ ժամանակահատվածում։ Կատարվող աշխատանքներն իրենց ճշտությամբ պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2002 թվականի հուլիսի 11-ի «1:500, 1:2000 և 1:5000 մասշտաբի տեղագրական հանույթների իրականացման հրահանգի մասին» N 392-Ն և 2009 թվականի փետրվարի 26-ի «Կադաստրային քարտեզագրման աշխատանքների իրականացման հրահանգը հաստատելու մասին» N 51-Ն հրամանների պահանջներին։

Նշված աշխատանքների իրականացման համար պետք է հիմք ընդունել գոյություն ունեցող բոլոր մասշտաբների տեղագրական և կադաստրային հատակագծերը, օդալուսանկարահանման և տիեզերալուսանկարահանման արդյունքում ստացված օրթոֆոտոհատակագծերը, հողահատկացման հատակագծերը և այլ գրաֆիկական տվյալներ։

Հանութագրման համար հարկավոր է ստեղծել հանութային խտացման ցանց՝ խտացնելով գեոդեզիական պլանաբարձունքային հիմքը ՋիՊիէս (գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ - GPS) դիտարկումների օգնությամբ։ ՋիՊիէս (գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ - GPS) դիտարկումներն անհրաժեշտ է իրականացնել արբանյակային դիրքորոշման կայաններով, 1-2 ժամ տևողությամբ՝ կետերի հեռավորությամբ պայմանավորված։

Հանութային հիմքի կետերի պլանային դիրքի սահմանային սխալանքը պետական գեոդեզիական և գեոդեզիական խտացման ցանցի կետերի նկատմամբ չպետք է գերազանցի հատակագծի մասշտաբի 0.2 մմ-ը։

Հանութագրման ընթացքում պետք է հանութագրել բոլոր շենքերը, շինությունները, հողամասերի սահմանները, ռելիեֆի տարրերը, գծային ենթակառուցվածքները, այդ թվում՝ ճանապարհները, կամուրջները, էլեկտրահաղորդման և կապի գծերը, գազատարները, ջրատարները, պոմպակայանները և այլն։

Ռելիեֆը պետք է հանութագրվի 0.5 մ կտրվածքով, իսկ մինչև 4 աստիճան թեքություններում՝ 0.25 մ ռելիեֆի կտրվածքով։ Ռելիեֆի հանութագրվող տարրերի պիկետների միջև հեռավորությունը պետք է լինի 20-30 մ, իսկ խտությունը պետք է բավարարի նշված կտրվածքներով ռելիեֆի ավտոմատ գծագրման պահանջները։

Քարտեզագրման աշխատանքները պետք է իրականացվեն ՎիՋիԷս համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում (WGS-84)։

Կադաստրային և տեղագրական քարտեզների համադրման, մեկ ընդհանուր քարտեզագրական հիմքի ստեղծման և թարմացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) գոյություն ունեցող տեղագրական և կադաստրային հատակագծերի հավաքագրում, ուսումնասիրում և մուտքագրում.

2) անհրաժեշտության դեպքում կոորդինատների վերահաշվարկ ՎիՋիԷս համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգում (WGS-84).

3) տեղագրական և կադաստրային հատակագծերի հիման վրա բնության մեջ փաստացի օգտագործվող և գրանցված իրավունքներին համապատասխան գույքի սահմանների համադրում.

4) համադրված հատակագծերի տպագրում՝ 1:1000 մասշտաբով.

5) համադրված հատակագծերի վրա իրադրության դաշտային ճշգրտում.

6) ճշգրտված ու թարմացված հատակագծերի թվայնացում և գրասենյակային մշակում.

7) անշարժ գույքի միավորների ծածկագրում.

8) անշարժ գույքի միավորների մակերեսների հաշվարկում և ցուցակների կազմում.

9) հողամասերի սահմանազատում և դասակարգում՝ ըստ սեփականության սուբյեկտների, ըստ նպատակային և գործառնական նշանակության.

10) էքսպլիկացիայի կազմում.

11) քարտեզների տպագրում։

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻՆ ՀԱՆՁՆՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ

Աշխատանքների ավարտից հետո պատվիրատուին պետք է հանձնվեն՝

1) Սևանա լճի ափամերձ՝ մինչև 1905.00 մ բացարձակ նիշը տարածքի տեղագրական և կադաստրային թվային քարտեզների էլեկտրոնային տարբերակը.

2) կադաստրային և տեղագրական հատակագծի թղթային տարբերակը՝ 1:1000 մասշտաբով, տպագրված՝ 2 օրինակից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
փետրվարի 11-ի N 123 - Ն որոշման

Ա Մ Փ Ո Փ Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՓԱՄԵՐՁ՝ ՄԻՆՉԵՎ 1905.00 Մ ԲԱՑԱՐՁԱԿ ՆԻՇԸ ՏԱՐԱԾՔԻ 1:1000 ՄԱՍՇՏԱԲԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

NN ը/կ	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ծավալը	Միավորի արժեքը (դրամ)	Ընդամենը (հազ. դրամ)
1.	Գոյություն ունեցող ելակետային նյութերի հավաքագրում և ուսումնասիրություն, հանութային պլանաբարձունքային հիմքի ստեղծում, հիմքի կետերի ՋիՊիԷս (GPS) դիտարկում, իրադրության հանութագրում, ռելիեֆի 0,5 մ, մինչև 4^0 թեքություններում՝ 0,25 մ կտրվածքով հանութագրում	հա	5400	11484	62013.6
2.	Դաշտային չափագրման տվյալների մուտքագրում, ռելիեֆի թվայնացում, իրադրության տարրերի թվայնացում, բնության մեջ փաստացի օգտագործվող և գրանցված իրավունքներին համապատասխան գույքի սահմանների համադրում	հա	5400	2135	11529.0
3.	Անշարժ գույքի միավորների թվայնացում, ցուցակների կազմում, միավորների ծածկագրում, մակերեսների հաշվարկ, հողերի դասակարգում՝ ըստ նպա-տակային և գործառնական նշանա-կության, էքսպլիկացիայի կազմում, ստեղծված նյութերի տպագրում	հա	5400	1525	8235.0
	Ընդամենը				81777.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_0123

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2010 թվականի
փետրվարի 11-ի N 123 - Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՓԱՄԵՐՁ՝ ՄԻՆՉԵՎ 1905.00 Մ ԲԱՑԱՐՁԱԿ ՆԻՇԸ ՏԱՐԱԾՔԻ 1:1000 ՄԱՍՇՏԱԲԻ ՏԵՂԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Նախատեսված աշխատանքների ծավալները և արժեքները՝ ըստ ամիսների			Ընդամենը
		ապրիլ-մայիս	հունիս-հուլիս	օգոստոս-սեպտեմբեր	
Սևանա լճի ափամերձ՝ մինչև 1905.00 մ բացարձակ նիշը տարածքի 1:1000 մասշտաբի տեղագրական և կադաստրային հատակագծերի կազմում	հա	1500.0	2100.0	1800.0	5400.0
	հազ. դրամ	22716.0	31802.4	27259.2	81777.6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

10_0123